ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշատի 1

№ 1022-Ա « 20 » մարտի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 27-Ի Հ.2079-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, հաշվի առնելով ըստ օրենքի 12.02.2024 թվականի ժառանգության իրավունքի վկայագիրը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 21.01.2025 թվականի եզրակացությունը, քաղաքացու դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 27-ի «Երևանի Մ.Խորենացու փողոցի հ.231/105 բնակելի տան և հողամասի նկատմամբ Խաչիկ Անուշավանի Բեգլարյանի իրավունքները վերականգնելու, 31.2 քմ մակերեսով հողամասն ուղղակի վաճառք միջոցով օտարելու մասին» հ.2079-Ա Ա որոշման/ այսուհետ Որոշում/ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում, նախաբանում, 1-ին, 2-րդ և 8-րդ կետերում «Խաչիկ Անուշավանի Բեգլարյանի» բառերը փոխարինել «Արսեն Խաչիկի Բեգլարյանի» բառերով.

2) Որոշման նախաբանում «Խաչիկ Անուշավանի Բեգլարյանի (ծնված 12.04.1942թ.)» բառերը փոխարինել «Արսեն Խաչիկի Բեգլարյանի (ծնված 07.05.1970թ.) բառերով.

3) Որոշման 3-րդ կետում «աշխատակազմի քարտուղարին» բառերը փոխարինել «աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ